զայն Հայք, և է այժմ 'ի ձեռս Հայոց ։ Սա ըստ աղաչանաց վարդապետացն Հայոց գնաց 'ի Սիս, և արար խաղաղութիւն 'ի մէջ միաբանաց Հայրապետանոցին, և 'ի յորդորել գնոսա ընտրել զայլ ոք առաքինի և իմաստուն յԱթոռն Հայրապետութեան. նոքա ընտրեցին զնոյն ինքն զՊօղոս և Օծին Կաթողիկոս յԱթոռն Սսոյ, որ և յետոյ բարեկարգեաց փոքր ինչ զԱթոռն զայն. Տես Հ. Մ. Չամչեան, Հատ. Գ. Երես 458 ։ Եւ վասն սոյն Հայրապետիս ասանդի նաև 'ի յիշատակարանս Ճառընտրի միրում. « Տէր Պօղոս` որ էր Արքեպիսկոպոս Երուսաղէմի, որ յետ սուղ ինչ աւուրց եղև Կաթուղիկոս ամենայն Հայոց. ետ գրել զՃառընտիրս զայս 'ի թուին Հայոց ՊԿԸ (1419). 'ի Սուլթանութեան չէյխի ։ Ի Հայրապետութեան Տ. Պօղոսի, և յնպիսկոպոսութեան Երուսաղէմի Տ. Մարտիրոս Մարցւոյն ։ Գրիգոր Կաթուղիկոս Խանձողատ, վասն ապերախտ ինչ գործոց, ընկեցեալ եղև յԱթոռոյն. և եկեալ տարան զՏէր Պօղոս և նստուցին յԱթոռ կաթուղիկոսութեան ։

Սուլթան Աշմէտ Պուրիս Պայի ամբարձաւ յիշխանական գահն Եգիպտական, եւ զօրացաւ քան զնախորդս. եկն յԵրուսաղէմ, և փակեաց զդրունս տաճարին Ս. Յարութեան, և արգել անտի զքրիստոնեայս ։ Իբրեւ լուաւ զայս Թագաւորն Հաբեշաց, որում անունն էր Արամ Իսահակ որդի Դաւթի. բարկացաւ յոյժ, և ետ կոտորել զամենայն այլազգիս 'ի սահմանս տէրութեան իւրոյ ։ Եւ Սուլթանն Պուրիս Պայի լուեալ զայս սրտմնեցաւ յոյժ. եւ երդմամբ չափ ուխտ ետ անձին իւրոյ, առնուլ զվրէժ այլազգեացն այնոցիկ 'ի քրիստոնէից, որք սրամահ եղեն յաշխարհն Եթովպացւոց ։ Եհան հրաման 'ի սուր սուրերի կոտորել զամենայն քրիստոնեայս որք բնակեալ են 'ի սահմանս տէրութեան իւրոյ, սպանանել նաև զՊատրիարգունս Աղէքսանդրիայ և Երուսաղէմի ։ Իբրեւ այդ եղեւ հրամանն յականջս նախարարաց նորին, փութացեալ անկան յոտս նորա, և աղաչէին զնա չհեղուլ զարիւն անպարտ, եւ այսպէս հազիւ ուրեմն չիջուցին զբոց բարկութեան նորա, և ազատեցան քրիստոնեայքն ։ Յաւելու ասել Արարացի պատմիչս, թէ ոչ կարացի գիտել զգործս Պատրիարգաց, զի 'ի դառն ժամանակին յայնմիկ չէր ոք որ 'ի դրի հարկանէր,